

ՉԱՔԱՐԻԱՅԻ ԵՎ ԻՎԱՆՆԻ ԱՐԱՐԱՏԱՌ ԱՐՁԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԸ ԱՆԲԵՐԴՈՒՄ

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

1965 թ. Անրերդի հնագիտական պեղումների ժամանակ եկեղեցու արևմտյան կողմում հայտնաբերվել է մի արաբատառ արձանագրություն¹, քանդակված տուֆ քարի վրա, որի չափերն են (մոտավորապես)՝ 54,5×35 սմ: Քարը վերևի կողմից ջարդված է, ուստի արձանագրության սկիզբը զուցե վնասված լինի:

Արձանագրությունը դրված է երեք տողի վրա: Առաջին տողի տառերը մասամբ եղծված են: Սկզբի բառը հստակ կերպով կարդացվում է՝ ամիր: Հաջորդ բառի առաջին տառը՝ սինը իր երևորատվաներով հստակ կարդացվում է, ապա դալիս է բ տառի առամը, որից հետո եկող սինը առանց ատմաների է, արաբական արագագրի սկզբունքով, որը թյուրիմացություն է ստեղծում և հավանաբար արդյունք է քանդակողի անփութության: Լամ-ալիֆի ներքին մասը պահպանվել է, իսկ վերևի մասը ջարդված է: Վերջապես բն տառը դրված է երկրորդ սինի վերևում: Այսպիսով ստացվում է **امير سينا**, որը հայկական արտասանության ազդեցության արդյունք է, քանի որ եթե դրվեր արևելյան լեզուներում (առաջին հերթին պարսկերենում) ընդունված ձևով, պիտի լիներ **امير سين**: ամիր սպահսալար, բայց ու տառը, ինչպես նաև երկրորդ սինից հետո երկար ա-ն այս արձանագրության մեջ կորել են:



Անրերդի արաբատառ արձանագրությունը:

Երկրորդ տողը սկսվում է դարձյալ ալիֆ տառով: Ի դեպ՝ երեք տողն էլ սկսվում են նույն այս ուղղագիծ ալիֆով՝ ստեղծելով ձևական համաչափություն: Սակայն երկրորդ տողի սկզբի ալիֆը իր տեղում չէ, եթե նկատի առնենք հաջորդ տառերը՝ քաֆ, ալիֆ, բն, յեի ատամ և ալիֆ, որի ամբողջությունը տալիս է ամաբիա **امام**: Պարզ է, որ սկզբի ալիֆի փոխարեն պետք է լինի զն, քանի որ այստեղ, անկասկած, Ջաքարիա անունն է գրված: Սակայն ոչ միայն սկզբի զնն երկարելով ալիֆի է փոխվել (զուցե հանուն համաչափության), այլև բառի մեջտեղում մի

¹ Սույն արձանագրության լուսանկարը մեզ տրամադրել է Անրերդի հնագիտական արշավախմբի ղեկավար Ս. Հարությունյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

ավելորդ ալիք կա, որովհետև արաբներենում Ջաքարիա անունը ընդհանրապես դրվում է հետևյալ ձևով՝ لا ج: Այս տողի երկրորդ բառը կարդացվում է՝ Լյուանա կամ Խուանա, այսինքն Խվանե (արաբներենում վ հնչյունը չկա): Իվանի անվան վրա նույնից վերև կա մի թեք գիծ, որը պետք է համարել ֆաթհա ձայնանշանը՝ այսինքն կախա: Այս ժամանակաշրջանից սկսած արաբական արձանագրություններում ձայնանշանները արդեն սովորական երևույթ են: Ձայնանշան դրված է միայն Իվանե անվան վրա, հավանաբար այն պատճառով, որ այս անունը անծանոթ է թե՛ մահմեդական, թե՛ նույնիսկ հայկական միջավայրում և կարիք է զգացվել ձայնանշանով ավելի հստակ դարձնել այն:

Քանդակող վարպետը ամեն կերպ ձգտել է արձանագրությունը ձախից և աջից երկար ուղղադիմ տառերով շրջապատել: Այս պատճառով նա ոչ միայն Ջուֆաիայի զեն ալիքի է վերածել, այլև հավանաբար Խվանեն դրել է Խվանա, որպեսզի վերջավորությունը լինի ուղղադիմ ալիք:

Երրորդ տողը դարձյալ սկսվում է ալիք տառով, ապա գալիս են լամբ, սադը (կոշտ ս), որից հետո քարը վնասված է, բայց կարծես թե ընդհանուր պետք է լինի: Ապա կարդացվում է վավ, նունի ատամ և յե: Ամբողջությունը կլինի ալ-ս[ը]ունի, որը կարդացվում է աւ-սունի: Թվում է, թե սկզբի ալը արաբների որոշիչ հոդն է, բայց ըստ էության դա քանդակողի կամ մեկ այլ անձնավորության կողմից կատարված պարզեցում է և այստեղ ամենայն հավանականությամբ պետք է լինի Ասունի կամ Ասունի (արաբներենում ծ չկա և բնականաբար նրան փոխարինել է կոշտ ս-ն):

Այսպիսով, ամբողջ արձանագրությունը կարդացվում է (ուղղելով միայն երկրորդ տողի սկզբի ալիքը և փոխարենը զեն դնելով)։

امير سبصار
زكاريا ابونا
الرونى

այսինքն՝

Ամիրսպասալար
Ջաքարիա Իվանա
Արծրունի

Արձանագրությունը դրված է արաբական նասխի գրածով, որը շատ հատկանշական է XIII դարի համար:

Ամիրսպասալար տիտղոսը Ջաքարին օգտագործել է զրեթե բոլոր արձանագրություններում: Դա այն տիտղոսն է, որ նա կրում էր իր հոր՝ Սարգսից հետո, որպես վրաց և հայոց զորքերի ընդհանուր սպարապետ: Արձանագրության մեջ Ջաքարի և Իվանի անունը ամիրսպասալար տիտղոսից հետո միասին հիշվելը հատուկ է նաև նրանց թողած հայերեն արձանագրություններին: Հռոմայրի արձանագրության մեջ դրված է. «Ի թուին Ուլջ ես ամիր սպասալար Ջաքարե եւ Իւանէ շինեցաք...»² Հայկական արձանագրություններում Ջաքարին հաճախ հիշվում է նաև Ջաքարիա ձևով. օրինակ, Հովհանավանքի 1207 թ. արձանագրության մեջ՝ «...ի ձեռն երկուց եղբարց հարազատաց Ջաքարիաի եւ Իւանէի»³:

Արձանագրության մեջ ամենատարօրինակ թվացողը Ջաքարի և Իվանի Արծրունի կոչվելն է: Հայտնի է, որ այլ արձանագրություններում (հայերեն) Ջաքարյանները իրենց կոչել են Բաղրատունի, ինչպես, օրինակ, Հաղարծինի արձանագրության մեջ (յազդէ Բաղրատունեան)⁴, սակայն Արծրունի չեն կոչվել:

Ըստ Վարդան պատմիչի, Ջաքարյանների նախնիները հարավային Հայաստանի կողմերից գաղթել են Տաշիր Ձորաղետ Բաղրատունի թագավորների օրոք և ստացել են խոշոունին որպես տիրույթ⁵, ապա նրանք. ըստ երևույթին, խնամիական կապերի մեջ են մտել Տաշիր Ձորաղետի Բաղրատունիների (Կյուրիկյան) հետ և այդ բանը նրանց հիմք է տվել բնկուղ բացառիկ դեպ-

² «Վիմական տարեգիր», կաղմեց Կ. Կոստանյանց, Պետերբուրգ, 1913, էջ 36:

³ Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Հովհանավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1949, էջ 82:

⁴ «Վիմական տարեգիր», էջ 141:

⁵ «Մեծին Վարդանայ Բարձրերդցոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 181:

քերում, Բաղրատունի կոչվելու, թեև մեծ մասամբ նրանք արձանագրություններում տոհմանուն չեն օգտագործում: Բայց Զաքարիա և Հովհան (Իվան) կղրայրների մայրը՝ Սահակղուխտը, նրժրունի տոհմից էր և քույրն էր նշանավոր Ամիր Քուրդ իշխանի, որի անունով էլ նրկու եղ-լայրները հիշվում են պատմիչների մոտ: Կիրակոս Կանձակեցին նրանց մասին խոսելիս ավե-լացնում է. «Որդիք քեռ բարեպաշտ իշխանին Քրդին, որ ընդ այն ժամանակս իշխէր բերդին Կա-յենոյ և դաւառին...»⁶: Իվանէին Արծրունի մորեղբոր անունով է հիշում նաև Վարդանը, խոսելով Գետիկի վանքի մասին. «Գոր շինեալ էր հրամանաւ Իւանէի քեռորդոյ մեծի իշխանին Քրդին...»⁷: Զաքարիայի և Իվանի մայրը՝ Սահակղուխտ Արծրունին, Անիի Զաքարեի եկեղեցու ներսում թողել է հետևյալ արձանագրությունը. «Սուրբ եւ մեղսաքաւիչ պատարագն որ սմա կատարի Սահակղի-տո է ծնաւդի Զաքարէա եւ Իւսնէի թագաւորաց Հաոց...»⁸, որտեղ Արծրունի իշխանուհին բացա-հայտ կերպով ցույց է տալիս իր փառասիրությունը՝ երկու որդիներին էլ թաղավոր կոչելով: Գաղտնիք չէ, որ Զաքարյանները աննշան տոհմից էին և, բնականաբար, բարձր դիրքի հասնելուց ու մեծատոհմիկ իշխանուհիների հետ ամուսնանալուց հետո պիտի կոչուէին այդ տոհմերի ան-վանը: Ուստի, ինչպես Բաղրատունի անունն են հիշում իրենց արձանագրություններում, նույնպես և Արծրունի անունը կարող էին հիշել:

Զաքարիայի ու Իվանի անունները Արծրունի Ամիր Քուրդ իշխանի անվան հետ կապելու հե-տևանք կարելի է համարել նաև այն առասպելը, թե այս հայկական տոհմը ծագում է քի քուրդ աղվէ»⁹: Անկախ այն բանից, թե մեր այս վերջին ենթադրությունը ինչքանով կարող է համա-պատասխանել իրականությանը, համենայն դեպս Անբերդի արարատառ արձանագրության մեջ Արծրունի անվան հիշատակումը այնքան էլ տարօրինակ չպիտք է թվաւ ըստ էության դա մի հե-տադրբական երևույթ է Զաքարյանների պատմության մեջ:

Այսուհանդերձ կարելի է նաև ենթադրել, որ արձանագրության սկիզբը ջարդված է և այս դեպքում կարելի է այլ կերպ կարդալ այն: Հավանական է, որ սկզբում եղած լինի հաղթեց կամ նման իմաստով մի այլ բառ (կամ բառեր), որից հետո գալիս է՝ Ամիրսպասալար Զաքարիա Իվա-նի, իսկ հաջորդող բառը դուցե համարենք ոչ թե տոհմանուն, այլ ուղիղ խնդիր, այսինքն նրա (նրանց) անունը, ում որ հաղթեցին Զաքարյանները:

Դժվար է ասել, թե Անբերդի նվաճումից (1196) հետո ո՞ր տարում է կանգնեցվել այս ար-ձանագրությունը: Անբերդի մոտ՝ Անտառուտ գյուղում գտնվում է հայերեն արձանագրությամբ մի խաչքար, որի վրա կարդում ենք.

Ի Ունթ (1200) թուական
ութինս ես Զաքար
եւ ամիր սպասալար Հա
յոց եւ Վրաց որդի մ
եծին Սարգսի առի զանա
ռիկ ամրոցս զԱնբերդոյ յաղախնայ
ծին որդոյն Հազարու որ⁹

• • • • •

Հենց այս աղախնածին որդիների դեմ տարած հաղթանակի առթիվ էր, որ կանգնեցվել էր նաև վերոհիշյալ արաբատառ արձանագրությունը նույն այդ հազարացիների (արաբների) լեզ-վով, որպեսզի տեղում մնացած մահմեդականները իմանան մեծ իրադարձությունը: Արաբական տիրապետության շրջանից և նրան հաջորդող բաղրատունյաց և այլ շրջաններից մեզ հասել են որոշ արաբերեն արձանագրություններ (Զվարթնոցում, Անիում և այլուր) զրված օտար տիրա-կալների կողմից, սակայն մինչև այժմ դեռ չկար հայ թաղավորի կամ իշխանի կողմից զրված որևէ արաբերեն (կամ արաբատառ) վիմագիր արձանագրություն: Եվ դա շատ բնական է. քանի որ բոլորովին էլ կարիք չկար օտարների լեզուն օգտագործելու: Սակայն լինում են առանձնահա-սուկ դեպքեր, երբ հայ տիրակալը քաղաքական որևէ կարևոր իրադարձություն հավերժացնելու համար հայկական արձանագրության կողքին հարմար է դաճում տեղադրել նաև օտար լեզվով արձանագրություն:

⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, Երևան, 1961, էջ 210:

⁷ Վարդան, էջ 184:

⁸ «Դիւան հայ վիմագրութեան», 1 (Անի քաղաք), կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 57 (արձան. 171):

⁹ Այս խաչքարը սկզբնապես, հավանաբար, եղել է հենց Անբերդում: Ե. Տեր-Մինասյան, Անբերդաձորի հնությունները և արձանագրությունները, «Էջմիածին», 1961, Ե. էջ 49: